զավակների նկատմամբ ցուցաբերած հյուրընկալ եղբայրական ոգուն, ինչը հիմք հանդիսացավ Լիբանանում Սփյուռքի ուժեղ գաղթօջախներից մեկի ձեւավորման եւ Հայաստանի ու Լիբանանի Հանրապետությունների միջեւ սերտ հարաբերությունների հաստատման համար:

Անդրադառնալով Միջին Արեւելքում քրիստոնեական համայքների կյանքին, ինչպես նաեւ Հայ Առաքելական եւ Հռոմեականաթոլիկ եկեղեցիների միջեւ առկա եղբայրական հարաբերություններին՝ Վեհափառ Հայրապետը ուղերձում վստահություն է հայտնել, որ Հայ եւ Մարոնիտ եկեղեցիների հարաբերություններում նոր ձեռքբերումներ կարձանագրվեն ի նպաստ տարածաշրջանի եւ երկու բարեկամ երկրների:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԱՄԱԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Մարտի 31-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց Շվեյցարիայի Համադաշնության նախագահ տիկին Միշելին Կալմի-Ռեյին՝ ուղեկցությամբ ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի:

Ողջունելով տիկին Կալմի-Ռեյին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակություն հայտնեց Հայաստանի եւ Շվեյցարիայի միջեւ զարգացող համագործակցության համար՝ վստահություն հայտնելով, որ նախագահի այցը մեծապես պիտի նպաստի երկու ժողովուրդների բարեկամության առավել ամրապնդմանը եւ արդյունավորմանը: «Մեզ միավորում է արժեքային համընդհանուր մի համակարգ, որի հիմքում ընկած է քրիստոնեական մեր հավատը: Այս առումով մեծապես կարեւորում ենք մեր՝ իբրեւ նաեւ հավատակից ժողովուրդների, համագործակցության ընդլայնումը տարբեր բնագավառներում»,- նշեց Նորին Սրբությունը՝ ընդգծելով հարաբերությունների զարգացման գործում Հայաստանում Շվեյցարիայի դեսպանության եւ Շվեյցարիայում հայկական համայնքի կարեւոր դերակատարությունը:

Ամենայն Հայոց Հայրապետը գնահատանքով անդրադարձավ նաեւ տիկին Կալմի-Ռեյի անձնական միջնորդական ջանքերին՝ ուղղված առանց նախապայմանների Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ հարաբերությունների կարգավորմանը:

Շվեյցարիայի Համադաշնության նախագահը, իր հերթին, շնորհակալություն հայտնեց ջերմ խոսքերի եւ բարի մաղթանքների համար: Իր խոսքում տիկին Կալմի-Ռեյն անդրադարձավ Շվեյցարիայի կյանքին:

Զրույցի ընթացքում խոսվեց Հայոց Ցեղասպանության խնդրի մասին: Այս առնչությամբ Նորին Սրբությունը նշեց, որ հայ ժողովուրդը երախտագիտությամբ է հիշում այդ մեծ ողբերգության օրերին շվեյցարացի անհատների կողմից հայորդիներին ցուցաբերած սրտակցութ-

Համադաշնության նախագահ Միշելին Կալմի-Ռեյին Մայր Աթոռում

յունն ու մարդասիրական աջակցությունը: Ի դեմս նախագահի՝ Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց Շվեյցարիայի ժողովրդին՝ Հայոց ցեղասպանության ճանաչման ու մարդկության դեմ ուղղված ոճիրի մերժողականության դատապարտման համար:

Նորին Սրբությունն ու Շվեյցարիայի Համադաշնության նախագահը խոսեցին նաև տարածաշրջանում խաղաղության պահպանման եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման անհրաժեշտության, ինչպես նաև այս առումով տարբեր երկրների եւ միջազգային կառույցների բերած աջակցության մասին:

Հանդիպման ընթացքում անդրադարձ եղավ Հայ Եկեղեցու միջեկեղեցական հարաբերություններին, Շվեյցարիայի հայոց թեմին եւ հայ համայնքի ազգային-եկեղեցական կյանքին: Ամենայն Հայոց Կաթողիկոսը Շվեյցարիայի Համադաշնության նախագահին ներկայացրեց նաև թեմի նորանշանակ առաջնորդական տեղապահ Տ. Մեսրոպ վարդապետ Պարսամյանին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ